

## ԴԱՐՁԻՐ #ՄԵԿ ՀԱՐԹԱԿԻ ԱՆԴԱՄ.

### ՆՊԱՍՏԻՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

**Միություն երիտասարդական կազմակերպությունների (ՄԵԿ) հարթակը հայտարարում է նոր անդամների միանալու հնարավորության մասին:**

Դեռևս 2018 թ.-ի հոկտեմբերին երիտասարդության ոլորտում գործունեություն ծավալող 7 կազմակերպություններ ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ ստեղծելով ՄԵԿ-ը: Միությունը նպատակ ունի երիտասարդության ոլորտում ձևավորել գործընկերություն այս ոլորտում գործող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց միջև, հանդես գալ երիտասարդներին ուղղված նախաձեռնություններով և աշխատանք իրականացնել երիտասարդության ոլորտում: Այսպիսով, ՄԵԿ-ը ստեղծում է համատեղ գործընկերություն և երիտասարդության ոլորտում կատարված աշխատանքների համակարգում:

**ՄԵԿ-ի հիմնադիր անդամներն են՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ-ն, «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը, «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ն, «Համայնքների համախմբման և աջակցության կենտրոն» Համայնքային ՀԿ-ն, «Ստեփանավանի երիտասարդական կենտրոն» ՀԿ-ն և ՕքսեՋեն հիմնադրամը:**

**ՄԵԿ-ին անդամակցելու համար անհրաժեշտ է տրամադրել հետևյալ փաստաթղթերը.**

1. Անդամակցության դիմում հայտի տրամադրում՝ հաստատված տվյալ կազմակերպության ղեկավարի կողմից
2. Երկու երաշխավորագրերի տրամադրում ՄԵԿ-ի հիմնադիր անդամների կողմից (լիիրավ անդամակցության համար)

Անդամակցության կարգին և միության կանոնակարգին կարող եք ծանոթանալ **Հավելված 1-ում:**

**Դիմում հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ ապրիլի 23-ն է:**

Հարցերի դեպքում կարող եք դիմել միության համակարգող Գրիգոր Զանիկյանին՝ [gjanikyan@oxygen.org.am](mailto:gjanikyan@oxygen.org.am) էլ. հասցեով:

---

*Նախաձեռնությունն իրականացվել է «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ հմտություններ ապագայի համար» տարածաշրջանային ծրագրի շրջանակներում (2018-2020թթ.), որն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ հետևյալ երեք երկրներում՝ Հայաստան, Վրաստան և Ուկրաինա: Ծրագիրը Հայաստանում իրականացվում է «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ ՕքսեՋեն հիմնադրամի հետ համագործակցությամբ:*

# Հավելված 1

## 1. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՆ

1. Միությունը ստեղծվել է սույն Կանոնակարգը հաստատած յոթ հիմնադիր կազմակերպությունների կողմից՝ նրանց գործընկերության միջոցով և Միության ստեղծման մասին հուշագիրը ստորագրելու արդյունքում: Միության հիմնադիր կազմակերպությունները նպատակ ունեն հզորացնել և զարգացնել երիտասարդության ոլորտում գործող կազմակերպությունների համագործակցությունը՝ տեղական, ազգային և միջազգային մակարդակներում:
2. Միությանը կարող են անդամակցել այն կազմակերպությունները, որոնք համապատասխանում են սույն Կանոնակարգով սահմանված չափանիշներին: Նոր կազմակերպությունների անդամակցությունը կատարվում է սույն Կանոնակարգում սահմանված կարգով:
3. Լիիրավ անդամ լինելու համար կազմակերպությունները պետք է համապատասխանեն հետևյալ չափանիշներին.
  - 1.3.1. լինել Հայաստանում պետական գրանցում ստացած, անկախ, ինքնավար, շահույթ չհետապնդող կազմակերպություն,
  - 1.3.2. հետամուտ լինել Միության նպատակներին և սույն Կանոնակարգի դրույթներին,
  - 1.3.3. մտահոգ լինել երիտասարդության ոլորտի հարցերով և ազդեցություն ունենալ դրանց լուծման գործում,
  - 1.3.4. գործել Միության սկզբունքներին համաձայն,
  - 1.3.5. ունենալ ժողովրդավարական նպատակներ և կառուցվածք,
  - 1.3.6. աշխատել երիտասարդների հետ և կազմակերպության կառավարման մարմիններում ապահովել երիտասարդների մասնակցությունը,
  - 1.3.7. ինքնուրույն լինել իր գործունեության հետ կապված որոշումների ընդունման հարցում:
4. Միության նոր անդամների ընդունումը կատարվում է հետևյալ կարգով.
  - 1.4.1. Միությանն անդամակցելու համար դիմող կազմակերպությունը ներկայացնում է Խորհրդի նախագահին անդամակցության հայտ: Դիմող կազմակերպությունը պետք է իր դիմումի մեջ հայտնի նաև Միության Կանոնակարգի և նպատակների հետ իր համաձայնության մասին: Անդամակցության մասին հայտը պետք է ստորագրված լինի դիմող կազմակերպության ղեկավարի կողմից:
  - 1.4.2. Նոր անդամի ընդունման հարցը պետք է քննարկվի Խորհրդի առաջիկա նիստում (հերթական կամ արտահերթ): Մինչև այդ նիստի հրավիրումը դիմող կազմակերպությունը պետք է ստանա Միության գործող անդամ-կազմակերպություններից առնվազն մեկի կողմից տրված բացատրագիր-նամակը տվյալ կազմակերպության անդամության նպատակահարմարության վերաբերյալ:
  - 1.4.3. Միության Խորհուրդը քննարկում է նոր անդամի ընդունման հարցը իր հերթական կամ արտահերթ նիստի ժամանակ: Նոր անդամների ընդունման հարցը պետք է լուծվի նիստին ներկա անդամների կողմից միաձայն:
  - 1.4.4. Անդամության հարցը դրական լուծելու դեպքում նոր ընդունված անդամ-կազմակերպությունը պետք է ստորագրի Միությանը միանալու համաձայնագիր՝ հաստատելով սույն Կանոնակարգով սահմանված դրույթների ընդունումը:

- 1.4.5. Նոր ընդունված անդամ-կազմակերպության լիազորված ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցելու Խորհրդի նիստերին, իր անդամության մասին դրական որոշումն ընդունելու օրվանից հաջորդող օրվանից:
  - 1.4.6. Խորհուրդն իրավունք ունի մերժել դիմող կազմակերպության անդամակցության մասին հայտը, եթե դիմող կազմակերպությունը չի համապատասխանում սույն Կանոնակարգով սահմանված չափանիշներին կամ չի պահպահում Կանոնակարգով սահմանված կարգը:
5. Միությանն անդամակցությունը դադարեցնելու համար սահմանվում է հետևյալ կարգը.
- 1.5.1. Կազմակերպությունը կարող է Միությունից դուրս գալ սեփական ցանկությամբ՝ այդ մասին նախապես՝ 30 (երեսուն) օրացուցային օր առաջ գրավոր ձևով տեղեկացնելով Միության մյուս անդամներին և Խորհրդի նախագահին: Տվյալ կազմակերպության անդամակցությունը համարվում է դադարեցված Միությունում՝ նշված ծանուցման ժամկետը լրանալու օրվանը հաջորդող օրվանից: Մինչև այդ օրը տվյալ կազմակերպությունը պարտավոր է կատարել Միության հանդեպ և/կամ դրա գործունեության, ծրագրերի հետ կապված իր կողմից ստանձնած բոլոր գործողությունները, միջոցառումները և պարտավորությունները, որպեսզի ապահովված լինի Միության գործունեության և ծրագրերի բնականոն ընթացքը:

## **2. ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Լիիրավ անդամների իրավունքներն ու պարտականությունները.
  - 2.1.1. Ստորագրում են փոխըմբռման հուշագիր,
  - 2.1.2. Մասնակցում են որոշումների կայացման գործընթացներին,
  - 2.1.3. Ըստ սահմանված կարգի մասնակցում են Միության հանդիպումներին,
  - 2.1.4. Մասնակցում են Միության որոշումների կայացման գործընթացներին,
  - 2.1.5. Օգտվում են Միության գործունեությունից,
  - 2.1.6. Առաջադրում են ներկայացուցիչներ Միության ԸԺ-ի համար:
2. Ասոցացված անդամ լինելու չափանիշներն են՝
  - 2.2.1. լինել Հայաստանում գրանցված անկախ, ինքնավար, շահույթ չհետապնդող կազմակերպություն,
  - 2.2.2. հետամուտ լինել Միության նպատակներին, մտահոգված լինել երիտասարդության ոլորտի հարցերով և ունենալ երիտասարդներին ուղղված ծրագրեր իրականացնելու փորձ,
  - 2.2.3. գործել Միության սկզբունքների համաձայն,
  - 2.2.4. ունենալ ժողովրդավարական նպատակներ և կառուցվածք,
  - 2.2.5. լիովին ընդունել Միության կանոնադրությունը,
  - 2.2.6. անդամների և/կամ շահառուների շրջանում ունենալ զգալի քանակությամբ երիտասարդների,
  - 2.2.7. չուղղորդվել որևէ արտաքին մարմնի կողմից իրենց որոշումներում:
3. Ասոցացված անդամների իրավունքներն ու պարտականությունները.
  - 2.3.1. Ըստ սահմանված կարգի մասնակցում են Միության հանդիպումներին,
  - 2.3.2. ունեն խորհրդատվական դեր,
  - 2.3.3. առանց քվեարկության իրավունքի մասնակցում են ԸԺ-ին,
  - 2.3.4. կարող են մասնակցել որոշումների քննարկմանը, արտահայտել կարծիքներ և դիրքորոշումներ,
  - 2.3.5. հիմնվելով սեփական որոշման վրա կարող են միանալ Միության հայտարարություններին և պնդումներին:

4. Կազմակերպությունները Միության աշխատանքներին մասնակցում են Կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև այդ ղեկավարների կողմից լիազորված անձանց միջոցով:
5. Կազմակերպության Միության աշխատանքներին մասնակցության ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:
6. Միությանն անդամակցության վերջնական հաստատումը, դադարեցումը և անդամության տեսակի փոփոխությունը կատարվում է քվեարկության միջոցով՝ ԸԺ-ին ներկա Միության բոլոր Հիմնական անդամների ձայների առնվազն 2/3-ով՝ չհաշված բացականերին:
7. Միության նոր լիարժեք և ասոցացված անդամների անդամակցության համար սահմանվում է հետևյալ ընթացակարգը.
  - 2.7.1. Միությանն անդամակցել ցանկացող կազմակերպությունը դիմում է Համակարգողին անդամակցության հայտադիմումը ստանալու, որից հետո լիարժեք լրացված և իր իրավասու մարմնի կողմից ստորագրված գրավոր հայտադիմումը ներկայացնում է Միություն:
  - 2.7.2. Դիմող կազմակերպությունը պետք է ներկայացնի Միության կանոնակարգին և ընթացակարգային կանոնների հետ համակարծիք լինելու մասին տեղեկանք՝ ստորագրված դիմող կազմակերպության լիազոր մարմնի կողմից:
  - 2.7.3. Միության անդամ կազմակերպություններից առնվազն մեկը տրամադրում է տվյալ կազմակերպության անդամությունը երաշխավորող նամակ:
  - 2.7.4. Միությանն անդամակցության հարցը քննարկվում է Միության հերթական ԸԺ-ի ժամանակ:
  - 2.7.5. Միությանը լիարժեք անդամակցության դիմող կազմակերպությունները, որոնք ԸԺ-ի կողմից բացասական որոշում են ստանում, կարող են ասոցացված անդամության համար վերադիմել միննույն ԸԺ-ին:
8. Միությանն անդամակցության վերջնական հաստատումը կատարվում է քվեարկության միջոցով՝ ԸԺ-ին ներկա Միության բոլոր հիմնական անդամների ձայների առնվազն 2/3-ով:
9. Քվեարկության դրական արդյունքից հետո նոր անդամ կազմակերպության լիազոր անձը ստորագրում է Միության Փոխըմբռնման հուշագիրը, որից հետո միայն կարող է համարվել Միության լիիրավ անդամ:
10. Միությանն անդամակցության դադարեցման համար սահմանվում է հետևյալը.
  - 2.10.1. Կազմակերպությունը կարող է Միությունից դուրս գալ սեփական ցանկությամբ՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով Միության այլ անդամներին: Անդամակցությունը համարվում է դադարեցված Միությանը գրավոր ծանուցմամբ: